

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,  
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Արայիկ Հարությունյանին

**ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ**

Խորեն Ոսկանյանից

Արմավիրի մարզ, քաղաք Արմավիր, Բաղրամյան փ. 62. 34 բն.

Հեռախոսահամար՝ +374 77 96 36 97

Էլ. փոստի հասցե՝ xoro-prod@mail.ru

**ԴԻՄՈՒՄ**

Խնդրում եմ ինձ ընդգրկել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը.


1. Ամփոփ տեղեկանք՝ վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ
2. Հիմնավորում՝ հասարակական խորհրդում ընդգրկվելու վերաբերյալ
3. Հակիրճ վերլուծություն՝ վերջին 3 տարիների ընթացքում նախարարության գործունեության և կրթության և գիտության բնագավառներում իրականացվող քաղաքականության վերաբերյալ


4. Եվ այլ փաստաթղթեր *առջին 11 թղթ*

Դիմող՝

*[Handwritten signature]* *Դր. Արմավիրյան*

« 29 » Նոյեմբերի 2019թ.





## Ամփոփ տեղեկանք՝ վերջին երկու տարվա ընթացքում իմ կողմից ծավալված գործունեության վերաբերյալ

Ես Խորեն Թադևոսի Ոսկանյանն եմ՝ ծնված 1992 թվականի մայիսի 18-ին: 1999-2009թթ սովորել եմ Արմավիրի թիվ 3 միջն դպրոցում: 2009 թվականին գերազանցությամբ ավարտելով դպրոցը՝ ընդունվել և 2013-ին ավարտել եմ Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Սոցիալական աշխատանք բաժինը (բակալավր): Բարձրագույն կրթություն ստանալու տարիներին կամավորական սկզբունքով սոցիալական աշխատանք եմ իրականացրել «Օրբան» ՀԿ-ում, «Սոցիալական արդարություն» ՀԿ-ում, «Հուլիսի կամուրջ» ՀԿ-ում, «Ընտանիք և համայնք» ՀԿ-ում և այլն: 2013 թվականից աշխատում եմ Արմավիրի Մ.Միլիկյանի անվան N6 հիմն. դպրոցում, որպես սոցիալական մանկավարժ:

Ներկայացնեմ վերջին երկու տարիների ընթացքում իմ կողմից ծավալված գործունեությունը

Դպրոցում, որպես սոցիալական մանկավարժ աշխատելուն զուգընթաց «Արևի շող» ՀԿ - ում կամավորության սկզբունքով կատարել եմ սոցիալական աշխատանք՝ ներառական կրթության կարիք ունեցող, բայց կրթությունից խոսափող սովորողների հետ: 2016 թ մասնակցելով ՀՀ ԿԳ նախարարին կից հասարակական խորհրդում ընդգրկվելու մրցույթին և ընդգրկվել եմ այդ խորհրդում 2 տարի ժամկետով, որից հետո 2018 թ. վերընդգրկվել եմ նույն խորհրդում: 2017 թ. կամավորության սկզբունքով սոցիալական աշխատանք եմ իրականացրել Ծաղկաձորի «Աղբյուր» ճամբարում, որտեղ հանգստանում էին հանրապետության սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ: 2018 թվականի հոկտեմբերի 1-ին մասնակցել եմ Կոնգրես հյուրանոցում կայացած «Ներառական կրթության ժամանակակից խնդիրներն ու մարտահրավերները» թեմայով գիտաժողովին: 2018թ հաշմանդամների միջազգային օրվա կապակցությամբ «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ի հետ համատեղ ընդգրկելով տարբեր դպրոցների շուրջ 300 9-12-րդ դասարանների սովորողների իրականացրել եմ քայլերթ՝ «Հանուն հավասարության» խորագիրը կրող: Մասնագիտական որակների զարգացման նպատակով մասնակցել եմ «Երկուսով» հոգեբանական կենտրոնի կողմից անցկացված սեմինարների՝ «Դժվար վարք, առանձնահատուկ երեխաներ և տարիք», «Ինչպես երեխային սովորեցնել սովորել» թեմաներով սեմինարների, սուպերվիզիաների: 2018 թ. Հուլիսի-1-ին Արմավիրի մարզպետի առաջարկով ընդունվել եմ աշխատանքի Արմավիրի մարզպետարանում, որպես ներառական կրթության փորձագետ ու համակարգել եմ Արմավիրի մարզի՝ համընդհանուր ներառական կրթության անցման գործընթացը: 2018թ Հուլիս-սեպտեմբեր ամիսներին ՀՀ Արմավիրի մարզպետի հրամանով ընդգրկվել եմ Արմավիրի մարզի դպրոցներում մոնիտորինգ անցկացնող խմբում՝ մոնիտորինգ անցկացնելով մարզի 48 դպրոցներում: Համընդհանուր ներառման անցմամբ պայմանավորված փոփոխություններին ծանոթացնելու և ներառական կրթությունը պատշաճ կազմակերպելը խթանելու նպատակով սեմինարներ, խորհրդատվություններ եմ իրականացրել տարբեր դպրոցների հոգեբանամանկավարժական խմբերի և տնօրենների մասնակցությամբ:

## Հիմնավորում՝ ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհրդում ընդգրկվելու վերաբերյալ

Քանի որ ԿԳՄՍ նախարարությունը գերատեսչական մարմին է , որը համակարգում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտները , մշակում է դրանց զարգացմանը ուղղված ռազմավարություն ու քաղաքականություն և ունի համապատասխան իրավասություն՝ դրանք իրագործելու, ցանկանում եմ շարունակել ընդգրկված լինելը ՀՀ ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհրդի կազմում և խորապես ու շարունակական ուսումնասիրություն կատարելով կրթության ոլորտում և վեր հանելով ոլորտում առկա խնդիրները, ինչպես նաև խորհրդի աշխատանքներում ներգրավված մյուս անդամների հետ մշակելով խնդիրների լուծման տարբերակներ՝ հասնել ոլորտի առջև ծառայած մարտահրավերների դիմագրավմանը: Խորհրդի կազմում կրկին լինելը ինձ հնարավորություն կտա լեզավ կերպով առավել խորը ուսումնասիրել ոլորտը, ինչպես նաև հասարակության շրջանում կարծիքների հակասությունների խումբը տեղափոխելով գերատեսչական մակարդակի այնպիսի ուղիներ գտնել, որոնք թույլ կտան խորացնել արժևորող վերաբերմունքը ՀՀ կրթության ոլորտի հետ սերտ առնչություն ունեցողների և հասարակության շրջանում : Քանի որ վստահ եմ՝ խորհրդի կազմում ընդգրկվողների հմտությունների ու գիտելիքների բարձր մակարդակի առկայության վրա , ուստի, խորհրդի կազմում լինելը նաև կնպաստի իմ մասնագիտական որակների առավել բարձրացմանը և կատարելագործմանը, քանի որ հնարավորություն կունենամ ոլորտի հետ առնչվող խնդիրներ քննարկել խորհրդի նախագահի և անդամների հետ: Սոցիալական աշխատանքը կրթության բնագավառում իր ուրույն դերն ու նշանակությունն ունի, քանի որ կրթությունը սերտ կապված է հասարակության բոլոր շերտերի հետ , և ես , որպես դպրոցում աշխատող սոցիալական մանկավարժ, ունենալով զարգացման փուլում գտնվող կարողություններ ու հմտություններ (խմբային ձևաչափով աշխատանքների կատարում, կոլեգիալ որոշումների կայացում, զարգացած շփման, տարբեր իրավիճակներում այլոց հետ ճիշտ հաղորդակցվելու , սեղմ ժամկետում որոշումներ կայացնելու կարողություններ) կկարողանամ աշխատանքային գործունեության ընթացքում ամբարած հմտությունները ու կարողությունները ծառայեցնել կրթության ոլորտի բարելավմանը, ինչպես արդեն նախանշված, այնպես էլ նախագծվող աշխատանքների առավել արդյունավետ կատարմանը: Կարծում եմ՝ կկարևորվի մարզերում ապրող և կրթության ոլորտի հետ սերտ առնչություն ունեցող անձանց՝ խորհրդի կազմում լինելը, քանի որ իմ կարծիքով այս խորհուրդը մի հարթակ է, որի միջոցով խնդիրները անհամեմատ ավելի շուտ կհասնեն գերատեսչական մարմին և կատանան համապատասխան լուծումներ:

Մարզերից ընդգրկված անդամների ներկայության միջոցով միաժամանակ կընդլայնվի ԿԳՄՍ նախարարություն և մարզային հասարակություն կառուցողական կապը: Մրցույթին մասնակցում եմ վստահ լինելով, որ ձևավորվող խորհուրդը՝ ԿԳՄՍ նախարար Արայիկ Հարությունյանի գլխավորությամբ կդրսևորի քաղաքական կամք և վճռականություն ու անմնացորդ և անվերապահորեն կկատարի իր վրա դրված պարտականությունները ու գործառույթները ի շահ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի առաջադիմմանը, հետևաբար՝ հայրենիքի հզորացմանը:

Հարգանքներով՝ Խորեն Ոսկանյան

**2016-2019թթ Նախարարության գործունեության և  
կրթության բնագավառում իրականացվող քաղաքականության  
վերլուծություն**

Հայաստանում կրթության ոլորտի բարեփոխումներն սկսվել են իրականացվել Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո՝ տնտեսական և հասարակական նոր հարաբերությունների պայմաններում: Բարեփոխումների շոշափելի և հասարակության կողմից արժևորվող ձեռքբերումների բացակայության պատճառով կրթության համակարգը հայտնվել է մի իրավիճակում , երբ խաթարված է կրթական հաստատությունների հեղինակությունը, վտանգված է վստահությունը բարեփոխումների և համակարգի ներուժի նկատմամբ: Միաժամանակ , թե՛ հասարակական գիտակցության մեջ , թե՛ պետական քաղաքականության կրթությունը շարունակում է մնալ գերակայությունների շարքում , որպես ազգային արժեք և սոցիալ - տնտեսական առաջընթացի կարևոր գործոն:

**1. Կրթության մատչելիությունը և մասնակցությունը**  
**1.1 Նախադպրոցական կրթություն**

Կրթության մատչելիության առումով առավել ցածր մակարդակում է գտնվում նախադպրոցական կրթությունը , քանզի հանրապետության 90-ից ավել համայնքներում չկան Ն/Դ հաստատություններ , իսկ նախադպրոցական ծրագրերում համախառն ընդգրկվածությունը չի գերազանցում 65%-ը , սակայն կարևորելով նախադպրոցական կրթության դերը , երեխաների համակողմանի զարգացման և դպրոցական կրթության համար հավասար մեկնարկային պայմաններ ստեղծելու նպատակով 2008 թ - ին ՀՀ կառավարության կողմից ընդունված և վերջին 3 տարիներին առավել խորը արմատներ ձգած <<Նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008 - 2015 թվականների ռազմավարական ծրագիրը>> զգալի չափով բարձրացրել է ընդգրկվածությունը՝ այն հասցնելով 2019 թ. 65%-ի:

1.2 Նախադպրոցական կրթության ոլորտի բացերը շտկելու և անցյալի սխալները ուղղելու օրենսդրական մեխանիզմներ է իր մեջ պարունակում 2017 թ ԿԳ նախարարության կողմից շրջանառության մեջ դրված ՆԱԽԱԴԴՐՈՑԱԿԱՆ ԿԹՈՒԻԹՅԱՆ ՄԱՍԻՆ օրենքի նախագիծը նոր խմբագրությամբ: Օրենքի ընդունումը թույլ կտա բացառել ն/դ հասակի երեխաների խտրականությունը բացառել և բոլորի համար ապահովել հավասար պայմաններ, ներառական կրթություն իրականացնել նաև նախադպրոցական հաստատություններում և այլն:

**1.3 Հանրակրթություն**

Հայաստանում հանրակրթության մեջ ընդգրկվածության էական խնդիր չկա: Համեմատական առումով համախառն ընդգրկվածությունը միջնակարգ կրթությունում բավականին բարձր է. վերջին 3 տարիներին այն միջինում կազմել է մոտ 92%:

Համեմատական առումով համախառն ընդգրկվածությունը միջնակարգ կրթությունում բավականին բարձր է. վերջին 3 տարիներին այն միջինում կազմել է մոտ 92%: Հիմնական կրթության համակարգում ընդգրկվածությունը 2016 թ. կազմել է 95.5% , որը միատարր է տարածքային, գենդերային ու աղքատության խմբերի առումով, և այս իմաստով էական անհավասարություններ չկան:

### 1.5 Ավագ դպրոց

Ավագ դպրոցում համախառն ընդգրկվածության ցուցանիշը զգալիորեն ավելի ցածր է՝ 2015-ին թ. 84.9%: Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել , որ հիմնական կրթությունից հետո սովորողների մոտ 10%-ն ուսումը շարունակում է նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում: Այսինքն, ավագ դպրոցում ընդգրկվածության ցածր մակարդակը դեռևս չի նշանակում , որ սովորողների զգալի մասը հիմնական դպրոցից հետո դուրս է մնում կրթությունից: Ավագ դպրոցում առկա է նաև գենդերային ոչ օրինաչափ ներգրավվածություն: Ինչպես վկայում են վիճակագրական տվյալները , տարրական և հիմնական դպրոցներում սովորողների շրջանում տղաները գերակշռում են: Սակայն պատկերը փոխվում է ավագ դպրոցում, երբ սովորողների թվաքանակում մեծանում է աղջիկների կշիռը , ինչը փաստում է այն մասին , որ հիմնական կրթությունից հետո առավել հաճախ դպրոցը թողնում են տղաները:

1.6 Միջին մասնագիտական կրթության օղակում՝ համեմատած նախորդ տարիների հետ , ցուցանիշների առաջադիմություն է գրանցվել. նախորդ 3 տարիների ընթացքում հիմնական դպրոցը ավարտող և կրթությունը շարունակողների մոտ 25 % -ը ցանկանում է ուսումը շարունակել միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, սակայն ցանկացողների միայն 10 %-ին է հաջողվում ընդունվել միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, քանի որ վերջին 2 տարվա ընթացքում առավել խստացվել է ընդունելությունը:

### 1.7 Ներառական կրթություն

Համընդհանուր ներառական կրթության անցմամբ պայմանավորված այդ ասպեկտում շոշափելի ռեֆորմներ են տեղի ունենում. փակվում են հատուկ դպրոցները և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող դպրոցահասակ երեխաները հաճախում են հանրակրթական դպրոցներ, ներդրվում են ուսուցչի օգնականի հաստիքներ, որոնք հեշտացնում են կրթադաստիարակչական գործընթացի իրականացումը և այլն: Հոգեբանամանկավարժական աջակցման կենտրոնների ստեղծմամբ հեշտացել է աջակցող խմբի անդամներին մեթոդական օգնություն ցուցաբերելը մարզերում:

### 1.8 Բարձրագույն կրթություն

Բարձրագույն կրթության մեջ ներգրավվածության մակարդակը թեպետ վերջին 3 տարիներին նվազել է , սակայն պատճառը ավելի շատ բնակչության սոցիալական վիճակն է , քան թերահավատությունը մատուցվող կրթության որակի նկատմամբ:

Թավշյա հեղափոխությունը իր հետ բարձրագույն ուսումնական հաստատությունների մաքրման գործընթաց բերեց, սակայն դրանից կրթության որակը սպասվածից քիչ բարձրացավ և այդ ոլորտը շարունակում է մնալ խոշորացույցի տակ պահելու ենթակա, քանի որ կան դեռ շատ խնդիրներ կապված պրոֆեսորադասախոսական անձնակազմի համալրման, ծրագրերի վերանայման և պահանջները արդի ժամանակներին համապատասխանեցնելու խնդիրներ:

## 2 Կրթության որակը և համապատասխանությունը

2.1 Վերջին 3 տարիների ընթացքում կրթության որակի բարելավման ուղղությամբ զգալի առաջընթաց է արձանագրվել՝ հատկապես հանրակրթության ոլորտում, որոնք ուղղված են եղել 12-ամյա կրթության և բուհերի ընդունելության միասնական քննությունների ներդրմանը ադապտացվելուն: Սակայն շարունակում է գերխնդիր մնալ Հանրակրթության պետական չափորոշչի վերանայումը և ուսումնական ծրագրերերի արդիականացումը: Իրականացվել է ուսուցիչների լայնածավալ վերապատրաստման ծրագիր՝ ուսուցման ժամանակակից մեթոդների և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ, բարելավվել է դպրոցների համալրվածությունը համակարգչային սարքավորումներով և ինտերնետ հասանելիությունը և այլն, սակայն չնայած կատարված լայնածավալ աշխատանքներին ու բարեփոխումներին, կրթության բոլոր մակարդակներում որակը շարունակում է մնալ գլխավոր հիմնախնդիր: Բոլոնիայի և Կոպենհագենի գործընթացների սկզբունքներին համապատասխան իրականացված մի շարք գործընթացներ, այդ թվում ներդրված բարձրագույն կրթության եռաստիճան համակարգը, ստեղծված՝ մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը, մշակման փուլում գտնվող որակի ներքին և արտաքին ապահովման համակարգերը, ՄԿՈՒ ոլորտի զարգացման ծրագրի շրջանակում նոր լաբորատորիաներով և տեխնիկական սարքավորումներով համալրված քոլեջները ուղղված են մասնագիտական կրթության որակի բարելավմանը, աշխատաշուկայի պահանջներին և եվրոպական ստանդարտներին համապատասխան կադրերի պատրաստման կարողությունների հզորացմանը, սակայն կրթության բալար մակարդակներում որակը շարունակում է մնալ գլխավոր հիմնախնդիրը, ինչը կապված է նաև որակի վստահելի և արժանահավաստ արդյունքային ցուցանիշների համակարգի ներդրված չլինելով: Ըստ կրթության համակարգի արդյունավետության ցուցանիշների էական տարբերություններ կան մարզերի միջև: Առավել խոցելի են Սյունիքի, Վայոց Ձորի և Արագածոտնի մարզերը, ինչը պայմանավորված է այդ մարզերում փոքրակազմ դպրոցների մեծ թվով: Այս հանգամանքը նշված մարզերում հանգեցնում է մեկ աշակերտի համար կատարվող ծախսի զգալի մեծացմանը՝ մյուս մարզերի համեմատ: Տարածքների համաչափ զարգացման նպատակով անհրաժեշտ է մշակել համահարթեցման հասցեական քաղաքականություններ: Այսպիսով, կրթության համակարգի արդյունավետության բարձրացման կարևոր հիմնախնդիրներից և նախապայմաններից է ցուցանիշների արդյունավետ համակարգի ներդրումը, ինչը հնարավորություն կտա մշակել փաստերի վրա հիմնված քաղաքականություններ:



### 3. Դասավանդող անձնակազմը

Կրթության որակի բարձրացման և բարեփոխումների հաջողության ապահովման առանցքային դերը պատկանում է մանկավարժներին: Քանակական առումով հանրապետությունում մանկավարժների պակաս չկա: Մեկ ուսուցչի միջին ծանրաբեռնվածությունը կազմում է մոտ 0.95 դրույք: Նախորդ տարիների համեմատությամբ հանրակրթության ոլորտում ուսուցիչների թիվը նվազել է, ինչը պայմանավորված է ինչպես սովորողների թվի նվազմամբ, այնպես էլ համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերով: Միաժամանակ, սահմանամերձ բնակավայրեր ուսուցիչների գործուղման, մարզերի համար կադրերի նպատակային պատրաստման ծրագրերի, մանկավարժների աշխատավարձի շարունակական բարձրացման քաղաքականության շնորհիվ կադրային ապահովման խնդիրը հանրապետությունում հիմնականում լուծված է: Աշխատող ուսուցիչների համակազմում մանկավարժական կրթությամբ ուսուցիչները 2018 թ-ին կազմել են 92%: Գերխնդիր է նաև հատկապես մարզերում գործող ներառական կրթությունն իրականացնող դպրոցների բազմամասնագիտական խմբերի՝ համապատասխան մասնագետներով համալրումը, նրանց մասնագիտական որակի բարձրացումը ինչպես նաև ԲՄՆ որոշ հաստիքներով նախատեսված մասնագետների պաշտոնային գործառույթների, պարտականությունների պատշաճ ամրագրված լինելու բացակայությունը, ինչը հաճախ բերում է սվյալ մասնագետների անգործության և տարբեր դպրոցներում այդ մասնագետների ծավալված գործունեություն տարբեր լինելուն:

### 4. Ծրագրամեթոդական ապահովումը և ուսումնանյութական բազան

Կրթական ծառայությունների որակի բարձրացման առումով կարևորվում է հանրակրթական դպրոցների ուսումնամեթոդական հենքի արդիականացումը և ծրագրային զարգացումն ու համապատասխանեցումը Ձեռքբերումներն այս ոլորտում ակնհայտ են, սակայն դասագրքաստեղծ աշխատանքները դեռևս բարելավման կարիք ունեն: Դասագրքերի որակը հեռու է բավարար լինելուց: Միշտ չէ, որ դրանք գրված են սովորողի համար մատչելի լեզվով: Խնդիր է նաև սովորողների ծանրաբեռնվածությունը: Այժմ էլ հանրակրթության ոլորտում՝ հատկապես՝ ավագ դպրոցում, ծրագրային ծանրաբեռնվածության, հանրակրթության չափորոշչի, առարկայական ծրագրերի ու դասագրքերի փոփոխման ու ուսումնական նյութի վերաբաշխման անհրաժեշտությունը շարունակում է մնալ որպես հանրակրթության որակի ապահովման հիմնախնդիրներից մեկը: Հանրակրթության ոլորտի կարևոր խնդիրներից է նաև ուսումնական գործընթացում ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրումը և հանրակրթական դպրոցների համալրումը արդիական համակարգչային միջոցներով: Այս ասպեկտում արդյունքները ոգևորող են, քանի որ մեկ համակարգչին բաժին ընկնող աշակերտների թիվը 2018թ. կազմել է 11,2 2012թ.՝ 27,9-ի նկատմամբ: Մասնագիտական կրթության կարևորագույն խնդիրներից է բուհերում և միջին

մասնագիտական ուսումնական հաստատություններում ժամանակակից, միջազգային պահանջներին համապատասխան կահավորված գրադարանների` այդ թվում էլեկտրոնային, բացակայությունը: Բարձրագույն ուսումնական հաստատությունների գրադարանային ֆոնդերը հնացած են և չեն համապատասխանում ժամանակակից գրադարաններին ներկայացվող պահանջներին:

#### 5.Սովորողների մասնագիտական կողմնորոշումը

Լուրջ խնդիր կա նաև մասնագիտական կողմնորոշման հետ կապված. Այսօր ՀՀ բուհերում մասնագետներ են պատրաստվում շուրջ 200 մասնագիտությունների գծով, որոնք ընդգրկված են 30 մասնագիտական խմբերում: Պետական բուհերի ուսանողների 26.4%-ն ընդգրկված է <<Հումանիտար գիտություններ>>, իսկ 17.8% և 11.9%-ը` <<Կրթություն և մանկավարժություն>> և <<Տնտեսագիտություն և կառավարում>> մասնագիտական խմբերում: Ուսանողների 83%-ը, ըստ Հայաստանի աշխատաշուկայի , մասնագիտությունն ընտրում է դրա` ժողովրդականություն վայելելու պատճառով, ոչ թե աշխատաշուկայում առկա պահանջարկով , այդ իսկ պատճառով Հայաստանում գործազուրկների մեջ ամենամեծ տոկոսը կազմում են մանկավարժական և առողջապահական մասնագիտություն ունեցողները` համապատասխանաբար 19.9% և 24.3% և դա այն դեպքում , երբ մասնագիտական կրթության ոլորտում այս մասնագիտություններով ընդգրկված ուսանողները կազմում են ամենամեծ խումբը:

#### 6. Կրթության կառավարումը

Հանրային կառավարման և մասնավորապես կրթության կառավարման բնագավառում իրականացվել են մի շարք բարեփոխումներ, որոնց արդյունքում մեծացել են ուսումնական հաստատությունների ինքնավարությունն ու պատասխանատվությունը, ընդլայնվել է քաղաքացիական հասարակության մասնակցությունը , նպաստավոր պայմաններ են ստեղծվել կրթության համակարգի և գործարար հանրության արդյունավետ երկխոսության համար, կառավարման մարմինների գործունեությունը դարձել է ավելի թափանցիկ: Մակայն արդյունավետ կառավարման համակարգ ունենալու համար դեռևս բազմաթիվ հիմնախնդիրներ կան, որոնք պետք է լուծվեն: Կարողությունների պակաս է զգացվում հատկապես ծրագրերի կառավարման, ռազմավարական պլանավորման, մոնիթորինգի և գնահատման , դոկտրինների հետ աշխատանքների բնագավառներում:

Հուսալի, բովանդակ և ամբողջական տվյալների ստացման մեխանիզմների բացակայությունը խոչընդոտում է փաստերի հիման վրա որոշումների կայացման գործընթացը , ինչը դժվարացնում է թույլ տրված սխալների ու թերությունների շտկումը:

մասնագիտական ուսումնական հաստատություններում ժամանակակից, միջազգային պահանջներին համապատասխան կահավորված գրադարանների` այդ թվում էլեկտրոնային, բացակայությունը: Բարձրագույն ուսումնական հաստատությունների գրադարանային ֆոնդերը հնացած են և չեն համապատասխանում ժամանակակից գրադարաններին ներկայացվող պահանջներին:

#### 5.Սովորողների մասնագիտական կողմնորոշումը

Լուրջ խնդիր կա նաև մասնագիտական կողմնորոշման հետ կապված. Այսօր ՀՀ բուհերում մասնագետներ են պատրաստվում շուրջ 200 մասնագիտությունների գծով, որոնք ընդգրկված են 30 մասնագիտական խմբերում: Պետական բուհերի ուսանողների 26.4%-ն ընդգրկված է <<Հումանիտար գիտություններ>>, իսկ 17.8% և 11.9%-ը` <<Կրթություն և մանկավարժություն>> և <<Տնտեսագիտություն և կառավարում>> մասնագիտական խմբերում: Ուսանողների 83%-ը, ըստ Հայաստանի աշխատաշուկայի , մասնագիտությունն ընտրում է դրա` ժողովրդականություն վայելելու պատճառով, ոչ թե աշխատաշուկայում առկա պահանջարկով , այդ իսկ պատճառով Հայաստանում գործազուրկների մեջ ամենամեծ տոկոսը կազմում են մանկավարժական և առողջապահական մասնագիտություն ունեցողները` համապատասխանաբար 19.9% և 24.3% և դա այն դեպքում , երբ մասնագիտական կրթության ոլորտում այս մասնագիտություններով ընդգրկված ուսանողները կազմում են ամենամեծ խումբը:

#### 6. Կրթության կառավարումը

Հանրային կառավարման և մասնավորապես կրթության կառավարման բնագավառում իրականացվել են մի շարք բարեփոխումներ, որոնց արդյունքում մեծացել են ուսումնական հաստատությունների ինքնավարությունն ու պատասխանատվությունը, ընդլայնվել է քաղաքացիական հասարակության մասնակցությունը , նպաստավոր պայմաններ են ստեղծվել կրթության համակարգի և գործարար հանրության արդյունավետ երկխոսության համար, կառավարման մարմինների գործունեությունը դարձել է ավելի թափանցիկ: Սակայն արդյունավետ կառավարման համակարգ ունենալու համար դեռևս բազմաթիվ հիմնախնդիրներ կան, որոնք պետք է լուծվեն: Կարողությունների պակաս է զգացվում հատկապես ծրագրերի կառավարման, ռազմավարական պլանավորման, մոնիթորինգի և գնահատման , դոնորների հետ աշխատանքների բնագավառներում:

Հուսալի, բովանդակ և ամբողջական տվյալների ստացման մեխանիզմների բացակայությունը խոչընդոտում է փաստերի հիման վրա որոշումների կայացման գործընթացը , ինչը դժվարացնում է թույլ տրված սխալների ու թերությունների շտկումը:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ ՀՀ կրթության համակարգում առկա են հետևյալ խնդիրները

- նախադպրոցական կրթական ծրագրերում երեխաների փոքր ընդգրկվածությունը
- հանրակրթական դպրոցների, հատկապես ավագ դպրոցի ուսումնամեթոդական հենքի արդիականացումը և ծրագրային զարգացումն ու համապատասխանեցումը
- ավագ դպրոցում ընդգրկվածության գենդերային և սոցիալական անհամամասնությունը
- ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների դանդաղ մուտքը ուսումնական գործընթաց, էլեկտրոնային ուսումնական նյութերի պակասը
- հանրակրթական դպրոցների հիմնական մասի ուսումնանյութական բազայի՝ ժամանակակից պահանջներին չհամապատասխանելը
- մանկավարժական կրթության՝ համակարգի արագընթաց փոփոխություններին համընթաց չլինելը, մանկավարժական կադրերի պատրաստման ու վերապատրաստման մեխանիզմների արդյունավետությունը ցածր
- հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ հնարավորությունների բացակայությունը,
- հուսալի, բովանդակ և ամբողջական տվյալների ստացման մեխանիզմների բացակայության պատճառով փաստերի հիման վրա որոշումների կայացման գործընթացի խոչընդոտումը,
- տեղական աշխատաշուկայի պահանջակից մասնագիտական կրթություն ստացած շրջանավարտների հմտությունների ու գիտելիքների չբավարարելը
- մասնագիտության ընտրության հարցում աշակերտների և երիտասարդների շրջանում գրեթե բացակայում է մասնագիտական կողմնորոշումը
- Կրթության ոլորտին հատկացվող ֆինանսական միջոցների և ծավալված գործունեության անհամապատասխանությունը

Խորեն Թադևոսի Ոսկանյան

25.11.2019թ.

ք. Արմավիր